

Արտի մէջ կայ մեայն մի տէր:
Բայց պայծառ չէ համայն կեանքը,
Եթէ սէրը լոյս չի անուամ:

Այո՛, այսպէս է տէրը: Ապա ուրեմն որչափ
փառաւոր և հոյակապ է քրիստոնէութիւնը, սե-
րոյ կրօնը, որ մարդու որտի մէջ հաւատ է կանգ-
նեցնում, թէ կայ վստմագոյն սիրոյ: Ահնազընը
և թէ Աստուած սիրած է մարդուն յաւիտենա-
կան սիրով:

Ս. Մ.



ԲԱՐՈՅԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ

(ԸՍՏ ԿԱՆՏ ՓԵՆՍՈՓԱՅԻ)

Մարդիկ սովորաբար հետաքրքրուած են առ-
օրեայ փոքրիկ հարցերով և շատ քիչ անդամ են
մտածում կեանքի բովանդակութեան, նպատակի և
մարդուն նշանակութեան մասին: Բայց լինում են
այնպիսի բաղնիքներ, որ մարդս ակամայ իրան հարց
է տալիս՝ այնպէս են ապրում, արդեօք, մարդիկ,
ինչպէս որ հարկն է. միթէ՛ բացի հանապազօրեայ
հոգսերից, կարիքներից, սուրբութիւններից և վշտե-
րից գոյութիւն չունի՝ մարդուն համար ու է աւելի
բարձր, վստմ նպատակ, որին հասնելու ձգտելը նա:

Այո՛, այդ տեսակ նպատակ գոյութիւն ունի.
ոմանք զգում են այդ սլարդ, և ոմանք մութ կեր-
պով: Պէտք է այդ մասին հողայ մարդ, որպէս զի
իր կենաց ճանապարհն անցնի լաւ, շիտակ, իսկական
չաւով, որով եթէ գնալու լինի, չի հեռանայ բա-
րուց և լոյսից, այլ բնօրհակառակը՝ կրօնական ա-
նոնց: Բացի առօրեայ չնչին նպատակներից, մարդս
պէտք է ունենայ նաև մի բարձրագոյն նպատակակէտ.
այդ տեսակ նպատակակէտին ձգտելը միմիայն կա-
րող է մարդկային կեանքին ու գործունէութեան
բովանդակութիւն տալ. այլապէս՝ անհասկանալի
կմնան մեզ մեր անթիւ—անհամար ձգտումները,
հոգսերը և մտածումները: Ինչի՛ համար մարդս գէտ
ու գէտ է ընկնում, ինչի՛ համար է նա իւր կեանքի
ընթացքում հողին ու միտքը լարուած գրութեան
մէջ պահում. միթէ՛ լոկ հանապազօրեայ հացի հա-
մար: Բայց չէ՛ որ՝ «Յ՛ միայն հացիւ կեցցէ մարդ»,
և հողիդ էլ չես կարող հացով կշտացնել: Ուրեմն
ինչի՛ համար:

Այսպիսի խորհրդի ժամանակ մարդ զգում է,
որ խորխորում է խաւարի մէջ, տանջւում է հողե-
պէս կեանքին թերի գիտակ լինելու սրտաճառով,
«Մի ուղեցոյց աստղ է փնտրում, որ իր առջև
փռուած ճանապարհը լուսաւորէ»: Ահանքը նման է

ծովին, մենք լողանում ենք՝ անձայր ծովի երեսին.—
հեռուն խաւար, ճանապարհը անյայտ, ամեն կողմից
և ամեն յոյզ տառնում են մեզ ծանծաղունները
և ստորջրեայ ժայռերը: Որպէսզի չմարտուենք այդ
անառձմանութեան մէջ, ջրաղտոյանների մէջ չընկնե-
մենք, չզարնուենք ժայռերին, մենք պէտք է լաւ
ճանաչենք շիտակ ճանապարհը և կարողանանք մեր
նաւն ուղղել ծանծաղունների և ստորջրեայ ժայ-
ռերի միջով: Պէտք է որ՝ առաջին լուսաւորէ փա-
րսը և իր լուսով զգուշացնէ մեզ վստմաւոր ուղ-
ղութիւններից:

Ահանքը շրջապատում է մարդուն հազար ու
մի տեսակ կեղծ պատրանքներով, որոնք շատ ան-
գամ ստիպում են մարդուն ի վստմ հանկու մի
կողմ հացի համար իր սրբութիւնները. միւս կող-
մից՝ կեանքը տառնում է նրան մատնել սովի,
զրկանքների, հիւանդութեանց, առանձնութեան...
Փորձանքների և սարսափների, շողորորութեանց և
տարակուսանաց մէջ մարդս կամայ—ակամայ ըն-
կնում է կրքերի, հակասութեանց, կասկածաստութեան
ցանցերի մէջ, որոնք աննկատելի կերպով նրա զան-
ու ձեռք շղթայում են. նա այս—այն կողմն է
ընկնում, չօչափելով է ման գալիս, վայր է ընկնում
և վերջապէս այլ ևս չէ կարողանում հասկանալ թէ՛
սրտեղ է լոյսը, սրտեղ խաւարը, սրտեղ բարին և
սրտեղ չարը:

Սարսափելի է մարդուն խորխորի իր տա-
րող կեանքի ընթացքում խաւարի մէջ: Ի դուր չէ,
որ հին ժամանակներում իրար հարց էին տալիս՝
«Ինչպէս ապրել, որ գնալու Իզուր չէ, որ ի հնուց
անտի խաւատունները և հատարակ մահկանացուները
աշխատում էին գտնել կեանքի իսկական ճանապար-
հը և անչեղ գնալ նրանով՝ ցոյց տալով խաւարում
խորխորիցներին ճանապարհը: Հռչակաւոր գերմա-
նացի փիլիսոփայ Կանտ (ծն. 1724, վախճ. 1804-ին)
քիչ ջանք չէ գործ գրել լուծելու կեանքի հանգոյցը:
Նաա կենսական խնդիրներ է լուծել այդ տաղանդա-
ւոր մտածողը, բայց բարձրագոյն լարոյթական ճշ-
մարտութեան վերաբերակ հարցը, այսինքն այն, թէ՛
ինչպէս պէտք է ապրել, զգայ և ինչպիսի կենսական
չաւովով պիտ ընթանայ մարդ, որ իսկական մարդ
լինի, աշխարհահոգի փիլիսոփայի ամենակարեւոր և
լուրջ մտածութեան աւարական է եղել համարեա իր
ամբողջ կեանքի ընթացքում:

Ըստ Կանտի, մարդ կարող է լինել կրթուած,
գիտուն, շատ բան հասկացող, ամեն ինչի մասին
լաւ գաղափարութիւն առող, բայց և միեւնոյն ժամանակ
շատ հեռու իսկական բարոյական ճշմարտութիւնից:
Ինչպէս երկիւնքը երկրից:

Մարդու խելքը կարող է հասունանալ և սրելու
բայց միեւնոյն ժամանակ նրա հոգեկան կեանքի ար-
մատում լուծ գրած մնալ կողմիտ ետսիրութիւնը:
Այս վիճակի մէջ է գտնուում, ըստ Կանտի, ներկայ

այնպիսի, որից բացակայում է բարոյական ձգտումը, կամքի բարոյական զեկը: Մինչդեռ՝ եթէ ուղղակի կամ չեղակի կերպով ծառայեն բարձրագույն բարոյական շահերին, այն ժամանակ միայն բանականութեան և կամքի բոլոր ջանքերը իրանց իսկական արժէքն ու նշանակութիւնը կունենան:

Ինչո՞ւմն է արդեօք այդ բարձրագույն շահը: Ինչի՞ մէջ պէտք է փնտռել կեանքի խորհուրդն ու նպատակը:

Մէթէ շտայլ կենցաղավարութեան, երջանկութեան մէջ...

Կանտ փրիստիան այդ հարցին զրականօրէն պատասխանում է. ո՛չ, ո՛չ, և հաղար անգամ ո՛չ: Եթէ որ, առում է նա, բանական արարածի համար միայն երջանկութիւնը լինէր բնութեան նպատակը, այդ դէպքում բանականութիւնը կիրքնէր իր իսկական նշանակութիւնը, որովհետեւ բնութիւնը ստեւած կլինէր մեղ ո՛չ միայն նպատակը, այլ և նրան հասնելու համար եղած բոլոր միջոցները. նա առում կլինէր մեղ երջանկութեանը ձգտելու բնապղը, որով մենք անշեղ և անխուսափելի կերպով կհասնէինք երջանկութեան: Ինչպէս որ ձուկը հէնց նոր դուրս եկած կրիան բնազդաբար քաշկլատում է այս ու այն կողմ կամ դէպի ծով. ինչպէս որ բազի ձողը բնազդաբար ջրի մէջն է նետում, այդպէս էլ մարդ ակամայ, առանց չորիէ դատողութեան, միայն բնազդին հնազանդելով՝ կձգտէր միայն դէպի այն կողմը, ուր կարող է գտնել ապահովութիւն. էլ ինչ կարելի կլինէր իր միտքը յղենքնելու ազոր հասնելու համար: Բնազդը կլիկազդէր մարդուն այն բոլորը, ինչ որ իրան պէտք է, և իր բանականութիւնը կդառնար նրա համար մի բոլորովին աւելորդ չափութիւն. բանականութիւնը այս դէպքում շատ շատ կարող էր հրճուել իր նախանձնի վիճակի վրայ: Անկենքն է, որ մեր ուղե կայ մի բոլորովին այլ նպատակ, որին հասնելու համար ստեւած է մեղ բանականութիւն: Եթէ բանականութիւնը ստեւած լիներ մեղ հէնց նրա համար, որ տանէր մեղ դէպի երջանկութիւն, մենք վաղուց հասած կլինէինք նորան. բայց գործնական կեանքում բոլորովին այլ բան ենք տեսնում. մարդս համարեւ չգիտէ թէ՛ որտեղ է և ինչո՞ւմն է երջանկութիւնը, և ինչպէս պէտք է հասնել անար Առօրեայ կեանքում յաճախ հանդիսատես ենք լինում թէ՛ ինչպէս նա, ով լաւելի շատ է ձգտում, շատ է ետանդ է թափում երջանկութեան հասնելու համար, աւելի հեռու է մղւում իսկական բախտաւորութիւնից: Մտերը արանից գալիս են այն եզրակացութեան, որ եթէ բանականութիւնը չէ կարող աղ մեղ երջանկութիւն, եթէ գիտութեան պատգնները չեն կարողանում մարդուն վիճակը բարեփել, ապա նշանակում է՝ որ բանականութիւնը ո՛չ մի արժէք չունի և հետեւաբար մարդկանց մէջ արծարծւում է

աւելորդին դէպի բանականութիւնը, որը կարծես թէ խոտանում է բախտաւորութիւն, բայց չէ տալիս այն: Մինչդեռ այս դէպքում ո՛չ թէ բանականութիւնն է մեղաւոր, այլ իրանք—մարդիկ, որոնք անզիտութեամբ ստիպում են բանականութեանը կատարել ո՛չ իրան յատուկ պաշտօնը՝ նրանք պէտք է բոլորովին մի այլ եզրակացութիւն հանէին, այն է. «Եթէ բանականութիւնը անպէտք է՝ իրի միջոց երջանկութեան հասնելու համար, ուրեմն պէտք է այն մի այլ նպատակ ունենայ»: Երբ բանականութիւնը կամքից դէնք է չինում երջանկութիւնը կամ բախտաւորութիւնը նուաճելու համար, նա իր պաշտօնը չէ կատարում: Բանականութեան իսկական նշանակութիւնը նրանում է, որ ըստ կարելոյն, կամքի վերայ ներգործէ, յորդորէ անոր, որ բարի և մաքուր մնայ: Բանականութիւնը չպէտք է սաի կամքին. «Ճանաչիր կատարելագործիկ այս կամ այն բանը, որպէս զի վայելիս բախտաւորութեան և յաջողութեան արդիւնքները», այլ «Գործիր միշտ այնպէս, որպէսզի միշտ մնաս բարի և մաքուր», որովհետեւ բարի և մաքուր կամքը կեանքի մէջ ամենաթանկագին բանն է. նա, ինչպէս զուտ ոսկի, թանգ է այն բոլոր բաներից, որ կարելի է ձեռք բերել նրա՝ կամքի միջոցով, թանգ է բոլոր շահերից և աշխարհային վայելքներից: Ոչ այս կեանքում, առում է Կանտ, և ոչ էլ հանդերձաւում չկայ անպայման մի այնպիսի բան, որ աւելի թանգ լինի, քան բարի կամքը: Երբ, սրամտութիւն, քաջութիւն, ամեն տեսակ տաղանդներ, հարստութիւն, փառք, իշխանութիւն, մինչև անգամ սուղջութիւն—կարող են ապարդիւն և վնասակար լինել, եթէ համեմտւած չեն բարի և մաքուր կամքով. իսկ մաքուր կամքը լինում է այն ժամանակ, երբ գործում է ո՛չ թէ շահադիտական նպատակներից զրդւած, ոչ թէ անձնական համակրութեան և հակակրութեան չնորհիւ, այլ միմիայն այն պատճառով, որ նա՝ կամքը կամեցում է բարի և միմիայն բարի. մաքուր կամքը վճիռները կախումն ունին ո՛չ թէ մարդու անձնական հակումներից, ցանկութիւնից ու արամադրութիւնից, այլ միմիայն նրա բարեացակամութիւնից, որին նա հետեւում է ազատ դիտակցութեամբ: Ահա այդ տեսակ կամքի բարոյական ձգտման մէջ է գտնւում մարդկային կեանքի բարոյական բարձրութիւնը և էութիւնը:

«Եթէ որ, առում է Կանտ, բախտի խաղերի կամ այլ որ և է պատճառով խոտասիրտ բնութիւնը իր ձիքերը բաժանելիս ժառառութեամբ է վերարեւել դէպի մարդը, նրա կամքը անկարող կլինէր ի կատար ածել իր բարի դիտաւորութիւնները. եթէ որ կամքը՝ յամառ կերպով ու անկեղծօրէն ճիղ թափելուց յետոյ էլ, չհասնի իր նպատակին, այնուամենայնիւ նա կմնայ իր բարոյական բարձրութեան վերայ, նման այն թանկագին քարին, որի արժանաւորութիւնը գտնւում է հէնց իր մէջը: Արդարեւ, մէթէ

մենք չենք տեսնում, ինչպէս մարդկանցից սմանք, աւելի լաւ ձիւրքերով օժտուած, աւելի լաւ կրթութիւն ստացած, ընկնելով բարեյաջող հանգամանքների մէջ, քիչ ետանդ գործ դնելով՝ աւելի շատ բան են կատարում, մինչդեռ սմանք, աւելի պակաս ձիւրքերով օժտուածները կամ կեանքի ծանրութեան ներքոյ ճնշումները շատ էլ աշխատում են բարութիւն անել, միշտ ձգտել դէպի այն՝ իրանց կամքի ամբողջ եռանդը լարում են բարուն ծառայելու համար, բայց և այնպէս դեռ ևս շատ հեռու են մնում իրանց բարենպաստի ձգտումների իրագործումից։ Առաջինները շատ բան են անում, միւսները—քիչ, և մինչև իսկ ոչինչ, բայց և այնպէս վերջիններիս բարոյական արժէքը աւելի բարձր է քան առաջինները, այն համեմատութեամբ, ինչ համեմատութեամբ որ բարին ցանկանալու և անոր հաղթելու ձգտումը ուժեղ է։ Այստեղ էականը այն չէ, որ կամքին չէ յաջողում հասնել՝ իր նպատակին, այլ այն՝ թէ՛ ի՞նչ է ներկայացնում ինքն ըստ ինքեան այդ կամք, ամենից առաջ ինչ է անոր կամեցածը, ինչ բանի է ձգտում այն, որովհետեւ, ըստ Կանտի, իսկական բարի կամքը պէտք է անհամեմատ աւելի բարձր գնահատել, քան այն կամքը, որ մարդուս ամեն տեսակ հակումներին բաւականութիւն է տալիս։

Բայց եթէ մարդը կամքի վերայ չեն ազդում ոչ հակումները, ոչ տրամադրութիւնները, ոչ կամքի գործունէութեան արդիւնքները, ապա ինչո՞վ պէտք է կամքը դեկլարուի։ Չէ որ մի խթան է հարկաւոր անոր ի գործունէութիւն հրաւիրելու համար։

Անոր դէպի պատշաճ գործունէութիւն զրդողը բարոյական օրէնքի պարսնանաչաւքիւնը, յարգանքն է դէպի այն՝ Նա տեսնում է իւր առաջ խիտ, պատկառելի օրէնք, խոնարհւում է անոր մեծութեան առաջ և աղատօրէն, ներքին ձայնի զրդմամբ, իր գործողութիւնները համաձայնեցնում է օրէնաց տրամադրութեանը։ Ահա այդ անկեղծ, խորին, անդրդուելի յարգանքը դէպի բարոյական օրէնքը՝ է վստահ բարոյական զգացում։ Այդ զգացումը միևնոյն ժամանակ և՛ ողորմելի է, և՛ վստահ։ Ողորմելի է այն պատճառով, որ բարոյական օրէնաց հրամանները հակադարձ են զգայական հակումներին և իշխեցնում են մարդուս իր կամքնած բարձրութիւնից, բայց այդ զգացումը միևնոյն ժամանակ վստահ է և նրանով, որ Նա չօգտվելի կերպով ցոյց է տալիս մեզ մեր հոգեկան բնութեան վստահութիւնը, որն ընդունակ է բոլոր հակումներից և զգայականութիւններից բարձր կանգնելու և բոլորովին սղոտ կերպով կենթարկուելու բնութեան մեծ օրէնքին։ Եթէ օրէնակ՝ մարդ հրաժարւում է հարբառութիւնից և հասարակական բարձր դիրք բռնելուց, այն պատճառով է, որ անոնք պահանջում են իր խղճի հետ առուտուր անել, այդպիսի հրա-

ժարումը ցուալի հետևանքներ կարող է ունենալ, որովհետեւ այդ դէպքում՝ մարդս կարող է կենթարկուել գրեկներների և հասարակութեան մէջ որոշ դիրք բռնելու անհնարաւորութեան վտանգին։ Բայց դրա հետ միասին, որչափ վեհութիւն այդ հրաժարման մէջ։ Մարդս զգում է իր մէջ այդ վստահութեան հերկայութիւնը, ուժի, որ խեղդում է շուտաուրեւ հասարակութեան ձայնը, որ ուժեղ է բոլոր ոյժերից։ Այդ գիտակցական ուժի մէջ մարդ կարծես բարձրանում է վեր, վեր, դէպի անհուն բարձրութիւնը և հպում նորա հետ Մարդ մասնակցով իրան թշուառութեան և անյայտութեան, միևնոյն ժամանակ տիրում է աշխարհիս ամենաթանկագին իշին՝ բարոյական ուժին, որը դարձնում է նրան անկախ կրքերից և աշխարհային պատարճներից, տալիս է նրան մի ներքին ազատութիւն և տանում նրան բարւոյ և ճշմարտութեան աշխարհ, ուր թագաւորում է վստահ բարոյական օրէնքը։ Երբ մարդ իրանից թափ տայ ամբարառանութեան ողին և հնազանդի բարոյական օրէնքին, այն ժամանակ, Կանտի ասելով՝ «Չէ կարող չնայել այդ օրէնքի բարձրութեան վերայ, հոգին կրարձրանայ այն չափով, ինչ չափով որ զգայ այդ օրէնաց վստահութիւնը»։ «Ներու բան, ասում է Կանտ, մարդու հոգին լցնում են յաւէտ նոր, յաւէտ անոյ զարմանքով ու փառաբանութեամբ, երբ մարդ իր ուշքն ու միտքը զոցա՞վկրայ է կենտրոնացնում՝ գլխավորիս տարածուող աստեղագարդ կերկնքը և իմ ներսս դանուող բարոյական օրէնքը»։

Բայց ինչ կերպով կարող եմ դանել իմ ներսի բարոյական օրէնքը, ճանաչել այն, դանազանել անոր ձայնը միւսների ձայներից։ Գուցէ աղոր համար մտքի առանձին լարումն է հարկաւոր։

«Ո՛չ, ասում է Կանտ, բարոյական օրէնքը գոյութիւն ունի մեր մէջ անկախ բոլոր գիտութիւններից, բոլոր փիլիսոփայութիւններից։ Մարդ զգում է իր մէջ այն՝ իբրեւ բարոյական զգացումն, իբրեւ որոշ ձեւի բարոյական բնագոյ, որի հրամաններին անպայման պիտի հնազանդի»։ Կանտի կարծիքով՝ մարդկային առողջ գոտողութիւնը շատ որոշ կերպով կարող է դանել՝ որն է լաւը և որը վատը, որն է բարոյական օրէնքներին համաձայն և որը հակառակը, ապա համար մի առանձին գիտութիւն չէ պահանջում, միայն հարկաւոր է որ մարդ ուշքի գալով լսի իր ներքին—բարոյական զգացման, այն, որ սովորաբար կոչւում է խղճի ձայն։ Բարի և անիւ լինելու համար կարելի չկայ, որ մարդ ուսման դանազան տեսակ գիտութիւններ ու փիլիսոփայութիւններ։ Փիլիսոփան շատ անգամ ստիպուած է լինում չեղուելու բարւոյ և ազնուութեան ճանապարհից դանազան կողմնակի մղութեան և դատողութիւնների հիմանց վրայ։ Բարոյական փիլիսոփայութիւնը հարկաւոր է մեզ միայն անոր

համար, որպէս զի մարդոց հասկացողութեանց մէջ բուն դրած բարոյական զգացումը զանազաններ միւս կողմնակի խառնուրդներէ, կասկածներէրէ և կեղծ ուղղութիւն ունեցող բանականութեան պատրանքներէ: Չէ որ մարդիկ ունին բազմաթիւ ցանկութիւններ, կրքեր և կողմնակալութիւններ, որոնք նախնայեալ են մարդոց մէջ պարտականութեանց հասկացողութիւնը, և նրանց աչքերի առջև յերաշջում բարոյական օրէնքի սրբութիւնը: Զգայական պահանջները, ասում է Կանտ, յաճախ ստիպում են մեզ կասկածով նայելու բարոյական օրէնքի նշանակութեանը կամ յերաշջելու այն՝ ի նպատակ մեր զգայական մտքի, և մենք, երբեմն չկատարելով այդ՝ սկսում ենք ամեն կերպ գատողութիւններ անել, կեղծ մտքերով խաբել թէ մեզ և թէ ուրիշներին, որպէս զի այդպիսով մի կերպ կարողանանք անցնել խիստ օրէնքի տակից և ապաստանել ամեն մեր զգայականութեան: Ահա և այդ սխալ ու խաբուսիկ դատողութեան դէմ զինւում է բարոյական փիլիսոփայութիւնը պաշտպանելու համար այդ մեծ օրէնքի անհնգամխելութիւնը: Մարդուն բարութիւն ուսուցանել նա անկարող է միայն օգնութեան է հասնում մարդու մէջ բուն դրած ամեն տեսակ խառնուրդներից բարին և մատուցողութեան համար: Եւ արդարեւ, բանը նրանում է, որ մարդս լաւ տեղեակ լինի բարոյական փիլիսոփայութեան ներութիւններին, այլ նրանում, որ անոր գործակցութեամբ պարզարանէ և ստիպանէ իր մէջ բարոյականութեան և ասոր գործունէութեան նիւթները: Աւելի լաւ է ոչինչ չխմանալ բարոյական փիլիսոփայութիւնից, բայց բարի և ազնիւ լինել, քան իմանալ այն, և միևնոյն ժամանակ մնալ բարոյական անանկ:

Բայց եթէ այդ այդպէս է, եթէ մարդու մէջ զոյութիւն ունի բարոյական օրէնք և բացարձակ հարաւորութիւն կատարելու այն, և զրա համար չէ պահանջում ո՛չ գիտութիւն, ո՛չ փիլիսոփայութիւն, հապա ինչո՞ւ, այնուամենայնիւ, մարդիկ թիւրաբանում են այդ օրէնքը կատարելու: Ինչո՞ւ հէնց իր՝ Կանտի խոստովանութեամբ «ներկայ մարդկութիւնը դեռ չառ հեռու է բարոյական սկզբունքներից»:

Կանտը բացատրում է այդ նրանով, որ բարոյական քարոզչները, այսինքն նրանք, որոնք ուսուցանում են թէ՛ ճորտի կենցաղ պէտք է վարեն մարդիկ, որ չդաւաճանեն բարոյական սկզբունքներին, ինքեանք այդ բարոյական սկզբունքները լաւ չեն մեկնում: Նրանք կամենալով, որքան կարելի է, համոզել խօսքերով ազատացանել այդ, խնդրից շատ անդամ չեղում և ընկնում են մութ, կեղծ ու պատիր փաստերի մէջ, և հէնց այդով էլ բարոյական ոյժի հիմքը խախտում, որովհետեւ բարոյականութեան ոյժը անպայման նրա փաստերի սրբու-

թեան և պարզութեան մէջ է: Աւելի լաւ է մատնացոյց անել մարդկանց իրանց գործած բարոյական սխալները, քան երկար ու բարակ հաս խօսել այդ տեսակ խնցանքները մասին՝ զարգարելով և ճշմանելով այն անտեղի յաւելումներով: Պարտականութեան սրբութեամբ կատարելու նկատմամբ խիստ ճշտապահ լինելը, Կանտի կարծիքով, աւելի խոր տպաւորութիւն է թողնում, քան ամեն տեսակ ծառայութիւններ կատարելը: Որեւէ բարի գործ, գործուած ոչ շահագիտական նպատակով, անշուշտ իւր հետեղներն ունենալու է: «Մինչև անգամ մանուկները, ասում է Կանտ, սիրով հետեւում են այդպիսի վարմունքի, այսպիսի դէպքում պարտականութեան մասին խօսք չի կարող լինել»:

Շատ անգամ իրանք, բարոյականութեան ուսուցիչներն են մեղաւոր, որ բարոյական օրէնքը այդպիսի թիւր է կատարում. բայց չարեաց արմատը անոր մէջն է, որ մարդկային կամքի վերայ շարունակ ներգործում են կարիքները, ցանկութիւնները, կրքերը: Եթէ որ կամքի վերայ ներգործէր միմիայն բարոյական օրէնքի դիտակցութիւնը, այդպիսի կամքը կլինէր բոլորովին անարատ և սուրբ. բայց առհասարակ կամքը և բանականութիւնը մարդկանց մօտ համեմալանութեամբ չեն գործում. բանականութիւնը դէպի մի կողմ է մղում, իսկ կամքը՝ մի այլ: Այդ դէպքում բարոյական օրէնքը ներգործում է կամքի վերայ ճշման միջոցով, այդ ճշմամբ, ի հարկէ, չէ լինում բանութեամբ, ֆիզիքապէս, այլ բարոյական ազդմամբ: Բարոյական օրէնքի ձայնը կարծես ասում է կամքին. «Ի՞նչ կարող ես չկատարել այն, ինչ որ հրամայում եմ, բայց պարտաւոր ես կատարելու այն»: Ահա այդ բարոյական անհրաժեշտութիւնն է, որ ստիպում է գլուխ խոնարհել օրէնքի առաջ. յարգել այն՝ կոչւում է պարտականութիւն: Սրբազան կամքը չգիտէ ինչ է օրէնքը, որովհետեւ նա միշտ համաձայն է բարոյական օրինաց հետ և կարիք չունի ստիպողութեան. պարտաւորութեան հասկացողութիւնը վերաբերում է միայն մարդկային կամքին, որ անընդհատ կռիւ է մղում բարոյական օրինաց հրամանների, ու բուն կրքերի, զգայական հակումների և տրամադրութեանց դէմ:

Բայց չի կարելի ասել որ ամեն տեսակ պարտաւորութիւն բարոյական է: Երբ օրինակ՝ առողջ դատողութիւնս հրամայում է որոշ նպատակի հասնելու համար այս կամ այն գործն անել, երբ նա ասում է ինձ՝ «Եթէ ուզում ես կատարելագործուել այս կամ այն ինչ արհեստի մէջ, դու այս և այն պիտի անես»... կամ՝ «Եթէ ուզում ես հասնել կրթանկութեան, դու այս կամ այն պիտի անես»... այդ կլինի բարոյական պարտք: Բարոյական օրէնքը ասում է միայն մի բան. «Այսպէս վարուի՛ր և ո՛չ այնպէս», որովհետեւ դու պարտաւորում ես այդպիսի անելու, առանց որ ես «եթէ»-ներեւ. դու պարտաւոր ես այդպէս անելու անկախ որ ես պատճառից,

առանց ի նկատի ունենալու թէ՛ այդպէս անելով օգուտ տուած կլինի՞րե՞նք մէկին, հաճելի կլինի՞ս ուրիշին, որե՛ն նպատակի կհասցնի՞ այդ քեզ Թրինակ՝ եթէ ես դառնում եմ ուրիշի կորցրած դրամները և յանձնում էլի նրան, այդ այն պատճառով, որովհետեւ անոնք տիրոջը հարկաւոր են, կամ թէ՛ խիղճս տանջել է ինձ, այդ տեսակ վարմունքը կլինի բաւ, բայց ոչ մարտը բարոյական սկզբունքների վրայ հիմնուած. բարոյական պարտքը հրամայում է ինձ վերադարձնել փողերը ուղղակի նրա համար, որովհետեւ անոնք ուրիշներին են, ուրեմն և պէտք է վերադարձնել, թէ՛ Էպէտ և այդ՝ փողերը իսկի հարկաւոր էլ չլինին իրանց տիրոջ։ Բայց Կանտի, կայ այնպիսի նշան, որի օգնութեամբ կարող է մարդ ճանաչել, թէ իւր վարմունքը համաձայն է արդեօք բարոյական (օրինաց) թէ ոչ։ Նա պէտք է իրան այսպիսի հարց տայ. «Յանկալի կլինե՞ր, որ իմ վարմունքը օրէնք դառնար ուրիշների համար», այսինքն ցանկալի կլինէ՞ր որ ամենքն էլ ինձպէս վարուէին Կամ՝ ցանկալի կլինէ՞ր, որ ինձ հետ վարուէին այնպէս, ինչպէս ես եմ վարւում ուրիշների հետ։ Թրինակ՝ ես մէկին խաբւում եմ, ցանկալի կլինէ՞ր, որ նա էլ հետեւէր ինձ, կամ խաբէր ինձ։ Ի հարկէ՞նք, այն Զէ որ եթէ ամենքն էլ իրար խաբէին, այն ժամանակ ոչ ոք իրար չէր հաւատայ և ձգտարութիւնն էլ կկորցնէր իր իրական նշանակութիւնը։

Այլ և բարոյական պարտքը պահանջում է մեզին, որ մեր մերձաւորին չնայեմք իրրեւ լոկ միջոցի մեր նպատակներին հասնելու համար։ Զի կարելի, օրինակ, բանւորի կամ սպասուորի կամ մեղ հեծակայ ո եւ է անձնաւորութեան վրայ նայել իրրեւ գործիքի. մենք պէտք է տեսնենք և յարկենք նրանց բարոյական անձնաւորութիւնը, նրանց բանական հոգին։ Իւրաքանչիւր բանական արարած, ասում է Կանտ, կարող է զանազան նպատակներ ունենալ, ամեն տեսակ միջոցներ հնարել, բայց ինքը անկարող է գործիք դառնալ իր դիտաւորութեանց կամ նպատակների համար։ Հենց այն պատճառով, որ նա ինքն է աղբիւր ամեն տեսակ նպատակների։ Իւրաքանչիւրն անպայման աշխատում է իր դոյութիւնը ցոյց տալ և ոչ ոք չէ ուզում, որ իրան նային իրրեւ մի շահագործուելու ստարկայի վրայ։ Բոլոր բանական արարածները ունին այդ պատճառով միասեռակ բարոյական իրաւունք։ Այստեղից սղարդ երեւում է Կանտի դէպի մարդկային բնութիւնն ունեցած յարգանքը, նրա բարոյական սպասութիւնը, նրա անձնաւորութիւնը, այստեղ նրա վարդապետութիւնից վսեմ արդարադատութեան հոգիը են փչում՝ հոգիը, որք արդեւում են բռնաւոր մարդկային իրաւանց վերայ, որոնց նշանաբանն է՝ անձնաւորութիւն եւ ոչ առարկայ։

Բայց մարդս պարտաւոր է յարգել ոչ միայն իր մերձաւորի անձնաւորութիւնը, այլ և իրանը։

Այդպիսի յարգը կոչւում է ամենին հարաւորութեան և յաւանութեան հետ. նա պահանջում է մարդուց ամենից առաջ բարոյական մարդութիւն Գու պէտք է բարոյապէս մարտը լինիս, ինչ որ էլ պատահելու լինի քեզ կամ ուրիշին, որովհետեւ դու բարոյական տեսակետից իրաւունք չունիս սե բիծ դնելու խցիկ վրայ և այդպիսով վշտացնելու բանական հոգիդ։ Թրինակ՝ ինչքան էլ քո ստալիսութիւնը անխառն կամ նոյն իսկ օգտակար լինի ընկերոջդ, դու չպէտք է ստես, որովհետեւ այդով դու ստորացնում ես մարդկային արժանաւորութիւնը։ Մարդկային այդ արժանաւորութեան դադարից Կանտը մի շարք բարոյական եղրակացութիւններ է հանում։

Այսպէս, մենք պէտք է ամենից առաջ բարոյապէս մարտը լինինք, մեր մէջ պէտք է դարգացնենք մարտը, դէպի բարին ձգտող կամք, մերբոլոր գործողութիւնները պէտք է համաձայնեցնենք անարյաման օրէնքին. իսկ օրէնքը հակառակ է մեր դէպի երկրային հաճոյքն ունեցած բռնն ձգտման, կրքերին, ծուլութեան և անդորը կենցաղաւորութեան նշանակում է՝ մեր ամբողջ կեանքի ընթացքում պէտք է մենք մեր անձի դէմ պայքար մղենք, որովհետեւ կեանքն առանց կռուի միտք չունի։ Մարդու կամքը անարատ չէ. նա պէտք է շատ ջանք թափէ, ներքին շատ կռիւներ մղէ, իր անձը անխնայ դրականներին ենթարկէ, որպէս զի կարող լինի, աստիճանաբար, կամէր դուր կողմնակի խառնուրդներից։ Բարոյական օրէնքի համար մղած կռուի մէջն է իսկական բարեգործութիւնը։

Միշտ կռու, միշտ ճիգ ու ջանք. իսկ ո՛ր մեայ երջանկութիւնը։ Ի հարկէ, հնազանդելով աղատօրէն բարոյական պարտքի պահանջներին, ճաշակում ենք, այսպէս ասած՝ բարոյական բանականութիւն. բայց յամենայն դէպս այդ երջանկութիւն չէ, որ զգում ենք մենք։ Այսպէս ուրեմն՝ միթէ վիճակուած է մեզ երջանկութեան համը չտանք։

«Բանականութիւնը չէ կարող մեզ երջանկութիւն տալ. նա մի այլ, աւելի վսեմ դեր ունի կատարելու».— այս խօսքերով է սկսում Կանտը և այս խօսքերով էլ վերջացնում իր վարդապետութիւնը։ Երջանկութիւնը՝ բայց Կանտի, վարձատրութիւն չէ բարեգործութեան փոխարէն, ոչ էլ բարեգործութիւնից բխած, և ոչ էլ բարեգործութեան նպատակ։ Եթէ մարդս բարեգործութիւն է անում երջանկութիւն վսեմ յիշելու համար, այդ բարեգործութիւն չի լինի, բարոյական յաղթանակ չի լինի, այլ գործնական հաշիւ.— այս դէպքում ձգտումը դէպի բարին չէ, այլ դէպի երջանկութիւն։ Բարեգործութեան միջոցով երջանկութեան ձգտելը մեզ մօտեցնում է երջանկութեան շաղկիւն. այդ պատճառով բանականութիւնը ասում է մեզ. «Ձգտեցէք ոչ թէ այն բանին, որ երջանկ լինի, այլ այն բանին, որ արժանի լինի երջանկութեան»։

Բայց եթէ մենք փառապաշտում ենք երջանկութեան, եթէ մենք մեր ամբողջ կեանքի ընթացքում շարունակ բռնուած ենք երջանկութեան հասնելու բռն ցանկութեամբ, և այնուամենայնիւ դեռ չստանանք երջանկութեան, այդ դէպքում մեր բանականութիւնը ընկնում է անհասկանալի հակասութեան մէջ, որի հետ նա չէ հաշուում Պէտք է վերջապէս երջանկութեան հասնեն նորա, որոնք, արդարեւ, արժանի են այդ բարձրութեան վերջապէս մի օր բարեգործութիւնը ոչտք է միանայ երջանկութեան հետ և կազմէ բարձրագոյն երջանկութիւն (այսինքն՝ մարդոց իրանց գործերի համեմատ). այդ անհրաժեշտօրէն պահանջում է մեր բանականութիւնը, չի կարող չպահանջել:

Բայց բանը նրանումն է, որ այս աշխարհում լինել կարողանում այնպիսի բացարձակ բարեգործութիւններ անել, որ արժանի լինին երջանկութեան, և այդ պատճառով էլ չենք կարողանում հասնել բարձրագոյն երջանկութեան Մեր նկատման աշխարհում անկարելի է հասնել իդէալական բարոյական բարձրութեան. արդէսզի մեր կամքը բոլորովին զանք կողմնակի խառնուրդներին, որոշեալի լիովին համաձայնեցնենք այն բարոյական օրինաց հրամաններին, ոչտք է մեր կեանքը շարունակուի նաև երկրային կեանքի սահմաններից դուրս, այլապէս՝ բարոյական կատարելութեան հասնելու համար մեր թափած ջանքերը ապարդիւն կանցնեն Այդ իսկ պատճառով՝ բանականութիւնը ամենայն իրաւամբ պահանջում է նաեւ երկրային կեանք, ոգու անմահութիւն: Բայց դեռ այս բոլորը չէ: Եթէ մենք այնտեղ, հանդերձեալ կեանքում, հասնենք վերջապէս ցանկալի բարոյական սրբութեան և լիակատար բարեբաններ լինինք՝ արժանի երջանկութեան, այդ դեռ ևս չի նշանակում, որ մենք հասնենք երջանկութեան և կարող ենք ճաշակել այն: Զէ՛ որ երջանկութիւնը և բարեբարութիւնը բոլորովին տարբեր բաներ են Այստեղ, մեր կեանքի մէջ, համոզում ենք իւրաքանչիւր քայլափոխում, որ՝ թէ՛ բարեգործութիւնը և թէ՛ երջանկութիւնը ուրոյն—ուրոյն բաներ են, իրարից առանձնացած: Անհրաժեշտ, ներքին, անբաժանելի կապ չկայ այս երկուսի մէջ, և այդ պատճառաւ չի կարելի բոլորովին հաւատարմ լինել, որ իրարուց աջարան տարբեր բաները կարող են մի ժամանակ ի մի ձուլուել: Կարող են ձուլուել միայն այն դէպքում, երբ մի գերբնական ոյժ ձուլէ անոնց: Եթէ բանականութիւնը անհրաժեշտօրէն պահանջում է բարեգործութեան միացումը երջանկութեան հետ, այն ժամանակ անհրաժեշտօրէն պահանջում է նաև գեղագոյն սյմի գոյութիւնը, որը միայն կարող է ի մի ձուլել այդ երկուսը: Այդ ոյժը չէ կարող լինել կոյր, մեքենայական. նա ոչտք է լինի բանական, այսինքն՝ Աստուածային Այդպիսով լինել—բանականութիւնը պահանջում է բարձրագոյն երջանկութիւն, ոգու անմահութիւն, Աստուծոյ գոյութիւն, նա չէ կարող չպահանջել այդ, այլ կերպով անհաշտ հակասութեան մէջ կրնան լինել իրեն հետ:

Կեանքի այս տեսակ յարաբերութիւնը ծանրաւիշա խնդիրների նկատմամբ՝ Կանաք հնարաւոր է համարում. իսկ այլ կերպ՝ բարոյականութիւնը իր իսկական նշանակութիւնը և արժէքը կարցրած: Եթէ օրինակ՝ բանականութիւնը ոչ միայն պահանջէր, այլ և ընդունակ լինէր ապացուցեցնելու հանդերձեալ կեանքի և Աստուծութեան գոյութիւնը. այսինքն՝ եթէ մենք ունենայինք բանական հաւատի փոխարէն շօշափելի սպասոյց, —այն ժամանակ բարոյականութիւնը աւելորդ բան կհամարուէր: Երեւակայեալ մի բոլոր, որ Աստուած և յաւիտենականութիւնը յանկարծ մեր աչքի առջև կանգնէին իրանց բոլոր գոյութեամբ: Ի՞նչ կլինէր մեր դրութիւնը այդ ժամանակ: Մեր գործողութիւնները կկատարուէին կամ երկիւղից ստիպում և կամ վարձատրութիւն ստանալու յուսով, — և ոչ մի կերպ բարոյական պարագիծի տակ կեանքը չէր լինէր: Եթէ մի կերպ բարոյական պարագիծի տակ կեանքը չէր լինէր, ապա է Կանաք, բարոյական օրէնքը դրական ոչինչ չի ստանալով հանդերձ և ոչնչով էլ չպարտաւորով, պահանջում է մեզինք միմիայն անբահատէր յարգանք դէպի այն:

Ահա դրա, դէպի միսմ օրէնքն ունեցած անչափաւոր յարգանքի, բարոյ անչափաւոր ցանկութեան մէջն է՝ գտնուում մեր բարոյական ազատութիւնը և մեր գործողութեանց բարոյական արժէքը:

Թարգմ. Գ. Ս.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՅՅՆԵՐ.

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՅՅ

«Вѣстникъ Европы» ամսագրի Սեպտեմբեր համարում գտնուում է Եկեղեցական գաղութական գործը Ռուսաստանում՝ վերնադրով մի յօդուած, որը կազմուած է թեմական վերահսկողների (епархіальный наблюдатель) և գաղութական խորհուրդների ներկայացրած հաշիւների հիման վրայ. յօդուածագիրը ի նկատի է առել 38 նահանգներում գտնուող գաղութներ: «Церковный Вѣстникъ» թերթը լսօսելով այս յօդուածի մասին՝ գաղապարաւոր է նորա կողմնապահութիւնը, որով յօդուածագիրը իւր ձեռքի տակ եղած պաշտօնական աղբիւրները 2 կարգի է բաժանել—Եկեղեց. գաղութի համար նպատաւոր և աննպատաւոր յեղացններով: և վերջիններս անպայման հաւատ է ընծայել, որովհետև իւր նպատակին ծառայել